

**«Սննդամթերքի հետ շփման մեջ մտնող պլաստիկ նյութերի
եւ առարկաների մասին» թիվ 10/2011 կանոնակարգը
(ԵՄ) փոփոխող՝ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 թվականի մարտի 3-ի
թիվ 202/2014 ԿԱՆՈՆԱԿԱՐԳ (ԵՄ)**

(Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ)

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ,

հաշվի առնելով «Եվրոպական միության գործունեության մասին» պայմանագիրը,
հաշվի առնելով «Սննդամթերքի հետ շփման մեջ մտնող նյութերի եւ
առարկաների մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2004 թվականի
հոկտեմբերի 27-ի թիվ 1935/2004 կանոնակարգը (ԵՄ) եւ ուժը կորցրած
ճանաչելով 80/590/ԵՏՀ եւ 89/109/ԵՏՀ հրահանգները¹ եւ մասնավորապես՝
դրանց 5(1), 11(3) եւ 12(6) հոդվածները,

քանի որ՝

- 1) Հանձնաժողովի թիվ 10/2011 կանոնակարգի (ԵՄ) I հավելվածով²
սահմանվում է Միության այն նյութերի ցանկը, որոնք կարող են
օգտագործվել պլաստիկ նյութերի ու առարկաների արտադրության մեջ
(«Միության՝ թույլատրված նյութերի ցանկ»).
- 2) 2012 թվականի հուլիսի 24-ին Սննդամթերքի անվտանգության հարցերով
Եվրոպական մարմինը դրական գիտական գնահատականներ տվեց երկու
լրացուցիչ նյութերի համար, որոնք են 2-ֆենիլ-3,3-բիս (4-հիդրոքսիֆենիլ)

¹ ՊՏ L 338, 13.11.2004թ., էջ 4:

² «Սննդամթերքի հետ շփման մեջ մտնող պլաստիկ նյութերի եւ առարկաների մասին»
Հանձնաժողովի 2011 թվականի հունվարի 14-ի թիվ 10/2011 կանոնակարգ (ԵՄ) (ՊՏ L 12,
15.1.2001թ., էջ 1):

Ֆթալիմիդինը¹ եւ 1,3-բիս (իզոցիանատոմերիլ) բենզենը²: Այս նյութերը՝ որպես սննդամթերքի հետ շփման մեջ մտնող (ՍՇՆ) թիվ 872 եւ 988 նյութեր, պետք է այժմ ավելացվեն Միության՝ թույլատրված նյութերի ցանկին.

- 3) թիվ 988 ՍՇՆ նյութի գիտական գնահատումից բխում է, որ դրա հիդրոլիզի արդյունքի, 1,3-բենզենդիմեթանամինի միգրացիան պետք է վերահսկվի: 1,3-բենզենդիմեթանամինն արդեն թույլատրված է որպես թիվ 421 ՍՇՆ նյութ: Քանի որ թիվ 421 եւ 988 ՍՇՆ նյութերի միգրացիան վերահսկվում է թիվ 421 ՍՇՆ նյութի միգրացիայի հիման վրա, պետք է սահմանվի նշված երկու նյութերը ներառող խմբային սահմանափակում: Հետեւաբար թիվ 421 ՍՇՆ նյութի թույլտվությունը պետք է փոփոխվի, եւ խմբային սահմանափակումները ներկայացվեն թիվ 10/2011 կանոնակարգի (ԵՄ) I հավելվածի 2-րդ աղյուսակում.
- 4) թիվ 340 ՍՇՆ նյութը (դիցիանոդիամիդ) թիվ 10/2011 կանոնակարգի (ԵՄ) I հավելվածի 1-ին աղյուսակում թույլատրված է որպես պլաստմասսայի մեջ օգտագործվող հավելում՝ առանց միգրացիայի կոնկրետ սահմանային թույլատրելի քանակության: Սննդամթերքի հարցերով գիտական կոմիտեի՝ 33-րդ շարքում ներկայացված կարծիքի մեջ³ սահմանվել է 1 մգ/կգ մարմնի քաշի համար օրական թույլատրելի քանակությունը (ՕԹՔ), որը հանգեցնում է սննդամթերքում 60 մգ/կգ միգրացիայի կոնկրետ սահմանային թույլատրելի քանակության (ՄԿՍԹՔ): Այս սահմանային թույլատրելի քանակությունը համընկնում է թիվ 10/2011 կանոնակարգի (ԵՄ) 11(2) հոդվածով սահմանված միգրացիայի կոնկրետ սահմանային ստանդարտ թույլատրելի քանակության հետ: Այնուամենայնիվ, քանի որ 60 մգ/կգ-ի ՄԿՍԹՔ-ն ստացվել է այնպիսի թունաբանական շեմից, ինչպիսին է ՕԹՔ-ն, ՄԿՍԹՔ-ն պետք է հստակորեն նշվի թիվ 10/2011 կանոնակարգի (ԵՄ) I հավելվածում.

¹ ՍԱԵՄ տեղեկագիր 2012. 10(7):2825:

² ՍԱԵՄ տեղեկագիր 2012. 10(7):2824:

³ Սննդամթերքի հարցերով գիտական կոմիտեի զեկույցներ, 33-րդ շարք, էջ 31, Եվրոպական համայնքների պաշտոնական հրապարակումների գրասենյակ, Լյուքսեմբուրգ, 1995 թվական, ISBN 92-826-9275-2:

- 5) ձեռնարկատերերի վարչական բեռը սահմանափակելու նպատակով այն պլաստիկ նյութերն ու առարկաները, որոնք թիվ 10/2011 կանոնակարգով (ԵՄ) սահմանված պահանջների հիման վրա օրինական ճանապարհով մուտք են գործել շուկա, եւ որոնք չեն համապատասխանում սույն կանոնակարգին, պետք է իրացվեն մինչեւ 2015 թվականի մարտի 24-ը: Դրանք պետք է շուկայում մնան մինչեւ առկա պաշարների սպառումը:
- 6) հետեւաբար թիվ 10/2011 կանոնակարգը (ԵՄ) պետք է համապատասխանաբար փոփոխվի:
- 7) սույն կանոնակարգով նախատեսված միջոցները համապատասխանում են Սննդամթերքի շղթայի եւ կենդանիների առողջության հարցերով մշտական կոմիտեի եզրակացությանը,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ.

Հոդված 1

Թիվ 10/2011 կանոնակարգի (ԵՄ) I հավելվածը փոփոխվել է սույն կանոնակարգի հավելվածին համապատասխան:

Հոդված 2

Այն պլաստիկ նյութերն ու առարկաները, որոնք օրինական ճանապարհով մուտք են գործել շուկա մինչեւ 2014 թվականի մարտի 24-ը, եւ որոնք չեն համապատասխանում սույն կանոնակարգին, կարող են իրացվել մինչեւ 2015 թվականի մարտի 24-ը: Այդ պլաստիկ նյութերն ու առարկաները կարող են նշված ամսաթվից հետո շուկայում մնալ մինչեւ առկա պաշարների սպառումը:

Հոդված 3

Սույն կանոնակարգն ուժի մեջ է մտնում *Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում* դրա հրապարակմանը հաջորդող քսաներորդ օրը:

Սույն կանոնակարգն ամբողջությամբ պարտադիր է անմիջականորեն կիրառելի է բոլոր անդամ պետություններում:

Կատարված է Բրյուսելում 2014 թվականի մարտի 3-ին:

Հանձնաժողովի կողմից՝

Նախագահ

Ժոզե Մանուել ԲԱՂՈՋՈՒ

ՀԱՎԵԼՎԱԾ

Թիվ 10/2011 կանոնակարգի (ԵՀ) I հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 1-ին աղյուսակում կատարել հետևյալ փոփոխությունները՝

ա) թիվ 340 ՍՇՆ նյութի (դիցիանոդիամիդ) ավելացումը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«340	47440	0000461-58-5	դիցիանոդիամիդ	Այո	Ոչ	Ոչ	60»			
------	-------	--------------	---------------	-----	----	----	-----	--	--	--

բ) թիվ 421 ՍՇՆ նյութի (1,3-բենզենդիմեթանամին) ավելացումը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«421	13000	0001477-55-0	1,3-բենզենդիմեթանամին	Ոչ	Այո	Ոչ		(34)»		
------	-------	--------------	-----------------------	----	-----	----	--	-------	--	--

գ) հետևյալն ավելացնել՝ ըստ հերթական համարի՝

«872		0006607-41-6	2-ֆենիլ-3,3-բիս(4- հիդրո-քսիֆենիլ) ֆտալիմիդին	Ոչ	Այո	Ոչ	0,05		Պետք է օգտագործվի միայն պոլիկարբոնատ համապոլիմերներում՝ որպես համամոնոմեր»	(20)»
------	--	--------------	---	----	-----	----	------	--	---	-------

դ) կատարել հետևյալ ավելացումը՝

«988	3634-83-1	1,3-բիս(իզոցիանատ-մեթիլ)բենզեն	Ոչ	Այո	Ոչ	(34)	<p>ՄԿԱԸԹ-ը [SML(T)] կիրառվում է դրա հիդրոլիզից ստացված արդյունքի, 1,3-բենզենդիմեթանամինի միզրացիայի նկատմամբ</p> <p>Պետք է օգտագործվի միայն որպես համամոնոմեր բազմաշերտ ժապավենի մեջ պոլի(էթիլեն տերեֆթալատ) պոլիմերային ժապավենի վրա միջին հաստության շերտով ծածկույթի արտադրության մեջ»</p>
------	-----------	--------------------------------	----	-----	----	------	---

2) 2-րդ աղյուսակում կատարել հետևյալ ավելացումը՝

«34	421 988	0,05	Արտահայտված որպես 1,3-բենզենդիմեթանամին»
-----	------------	------	--

3) 3-րդ աղյուսակում կատարել հետևյալ ավելացումը՝

«20)	Նյութը պարունակում է անիլին որպես խառնուկ. անհրաժեշտ է կատարել առաջնային հոտավետ ամինների համար II (2) հավելվածով սահմանված սահմանափակմանը համապատասխանության ստուգում:»:
------	---